

«ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ և ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՈՐԱԿԻ ԱՌՑԱՆՑ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ և ՌԵՍՈՒՐՍ ՇՏԵՄԱՐԱՆԻ» ՄՇԱԿՄԱՆ և ՆԵՐԴՐՄԱՆ ՄՐՑՈՒՅԹ

Երևանի պետական համալսարանը (ԵՊՀ) տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաների (ՏՀՏ) ոլորտի կազմակերպություններին հրավիրում է մասնակցելու «Դասընթացների և կրթական ծրագրերի որակի առցանց կառավարման համակարգի և ռեսուրս շտեմարանի» (ՈԿՀ) մշակման և ներդրման մրցույթին:

ՈԿՀ-ի համակարգի ստեղծման աշխատանքները ներառում են՝

- առցանց համակարգի ծրագրային ապահովման կառուցվածքի մշակում, առցանց գործիքների դիզայնի տարբերակների մշակում և քննարկում,
- համակարգի բաղադրիչ տվյալների բազաների նախագծում և ստեղծում,
- համակարգի օգտագործողների (ուսանողներ) կողմից անհատական տիրույթ մուտք գործելու և համակարգում աշխատելու (դասընթացների գնահատում և այլն) ծրագրային միջոցների ստեղծում,
- համակարգում օգտագործողների կողմից կատարված գնահատման արդյունքների ամփոփման, վերլուծության և հաշվետվությունների ներկայացման համակարգի ստեղծում,
- օգտվողների կողմից (դասախոսական և վարչական կազմ) դասընթացների և կրթական ծրագրերի որակի բարելավմանն ուղղված միջոցառումների ծրագրի առցանց մշակման և հրապարակման համակարգի ստեղծում,
- ՈԿՀ համակարգի կառավարման գործիքի մշակում,
- համակարգի գործարկում համացանցում,
- համակարգի ադմինիստրատորի ուսուցում/վերապատրաստում,
- տեխնիկական աջակցություն համակարգի ադմինիստրատորին՝ այն համացանցում գործարկելուց հետո 6 ամսվա ընթացքում:

Դիմող կազմակերպությունը պետք է բավարարի փորձին և որակավորմանը ներկայացվող հետևյալ նվազագույն պահանջներին.

- ՏՀՏ ոլորտում գործունեության առնվազն 5 տարվա փորձ,
- վերջին 5 տարիների ընթացքում 1000 և ավելի օգտվողների համար նախատեսված առնվազն 2 Web-հենքով (ինտերնետ միջավայրում) առցանց ինտերակտիվ տեղեկատվական համակարգերի ստեղծման հաջողված փորձ,
- բուհական ոլորտում առցանց տեղեկատվական համակարգերի ստեղծման փորձը ցանկալի է,
- որակյալ անձնակազմ, որն ունի ՏՀՏ ոլորտում աշխատանքի առնվազն 5 տարվա փորձ, ինչպես նաև առցանց գնահատման և/կամ հարցման համակարգերի մշակման փորձ,
- ֆինանսական կայունություն:

Հետաքրքրված կազմակերպությունները դիմումին կից պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

- պետական գրանցման վկայականի պատճենը,
- տեղեկանք կազմակերպության գործունեության ժամանակահատվածի մասին և այդ ընթացքում իրականացրած համապատասխան բնույթի աշխատանքների նկարագրությունը,
- վերջին 5 տարիների ընթացքում կատարած նմանատիպ աշխատանքների ցանկը՝ նշելով դրանց կատարման ժամկետները,
- մշակող խմբի անդամների անձնական թերթիկները (CV), որոնք պետք է պարունակեն աշխատակցի անուն ազգանունը, ծննդյան թիվը, կրթությունը, մասնագիտությունը, մանրամասն աշխատանքային փորձը:

Հայտերը պետք է ներկայացնել Երևանի պետական համալսարանի (ԵՊՀ) ընդհանուր բաժին (ՀՀ, Երևան, Ալեք Մանուկյան 1, կենտրոնական մասնաշենք, 2-րդ հարկ, 207 սենյակ) մինչև 2013 թ-ի օգոստոսի 30-ը, ժ. 17.00:

Լրացուցիչ տեղեկատվության համար խնդրում ենք դիմել վերոհիշյալ հասցեով կամ զանգահարել՝ (010) 55 16 83, (091) 72 01 78 հեռախոսահամարներով: